ԺԳ.00.03 – Հատուկ մանկավարժություն (տիֆլոմանկավարժություն, սուրդոմանկավարժություն և օլիգոֆրենոմանկավարժություն, լոգոպեդիա, էրգոթերապիա)

1. Հատուկ մանկավարժության արդի հիմնախնդիրները

Հիմնական հասկացություններ: Հատուկ մանկավարժություն, հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություններ, շտկող-մանկավարժական գործընթաց, հատուկ կրթական կարիքներ, մասնագիտական կոմպետենտություն, մասնագիտական գործունեություն:

Հատուկ մանկավարժության մեթոդաբանական հիմքերը: Անցում դեպի հետդասական մոդելի գիտության՝ ուշադրություն առարկայի, գիտելիքների գործնական ուղղվածությունը, դրա կիրառականությանը: Ժամանակակից մանկավարժական գիտության զարգացման ռազմավարություններ. ինտերիորիզացիա, էքստերիորիզացիա, պրոբլեմատիզացիա, ռեֆլեքսիա Հետազոտության խնդիրների և թեմաների արդիականացումը հատուկ մանկավարժության մեջ. մշակութաբանական, սոցիալական սուբյեկտիվ համատեքստ, միջառարկայական կապերի օպտիմալացում և մշակութային հետազոտություններ: Հատուկ մանկավարժության մեթոդաբանության հիմնական մակարդակները՝ փիլիսոփայական, ընդհանուր գիտական, կոնկրետ գիտական, տեխնոլոգիական: Հատուկ մանկավարժության զարգացումը ժամանակակից մանկավարժական պարադիգմի համատեքստում՝ ճանաչողական-տեղեկատվական, անձնային, մշակութաբանական, կոմպետենտ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան (ԿԱՊԿՈՒ), որպես հատուկ մանկավարժական գործընթացի սուբյեկտ: ԿԱՊԿՈՒ երեխաների հետազոտության ասպեկտները՝ կլինիկական, հոգեբանական, մանկավարժական, սոցիոլոգիական: ԿԱՊԿՈՒ անձանց դասակարգման խնդիրը. նոզոլոգիական և ֆունկցիոնալ մոտեցումներ: Կենսագործունեության և առողջության գործունեության, սահմանափակումների միջազգային դասակարգում (ICIDH): Կենսագործունեության կարգավորման հայեցակարգը (Б. Нирье, Н.Э. Банк-Миккельсон, В. Вольфенсберг): Հատուկ կրթական կարիքները: ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման եւ դաստիարակության տարբերակված եւ

անհատական մոտեցման իրականացման խնդիրը: Կրթական գործունեության հաջողության հիմնական ուղենիշերը. Սոցիալական կախվածության, անձի հաշմանդամության կանխարգելման և հաղթահարման ուղիների խնդիրը:Ներառական կրթություն, համընդհանուր ներառում:

2. *Հատուկ մանկավարժությունը և հատուկ կրթության զարգացման արդի հիմնախնդիրները*

Հիմնական հասկացություններ*:* Աբիլիտացիա, շտկում, փոխհատուցտում, վերականգնում, բնականոն զարգացում, խանգարում, դեպրիվացիա, վաղ համալիր օգնություն, հատուկ կրթություն, հատուկ կրթության բովանդակություն, ինտեգրացված ուսուցում և դաստիարակություն, համընդհանուր ներառում, ներառական կրթություն, հարմարեցված միջավայր:

Հատուկ կրթության համակարգի զարգացման արդի միտումները:ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման և դաստիարակության բովանդակության և մեթոդիկայի մշակման խնդիրը: ԿԱՊԿՈՒ անձանց կրթության բովանդակության զարգացում կոմպետենտ հիմունքներով: Կրթական գործընթացի ծրագրային ապահովում ուսուցման բոլոր փուլերում: ԿԱՊԿՈՒ երեխաների համար ուսումնամեթոդական համալիրների (այդ թվում՝ էլեկտրոնային) մշակում և ներդրում: Ուսումնադաստիարակչական գործընթացի ուղղման ուղղվածության էությունը, դրա իրականացումն ապահովող սկզբունքների համակարգը: Ժամանակակից տեխնոլոգիական և ռեսուրսային ապահովումը հատուկ կրթության մեջ. Մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման խնդիրը, ԿԱՊԿՈՒ անձանց կրթության գործընթացում առողջապահական տեխնոլոգիաների մշակումն ու ներդրումը: ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթական միջավայրի կազմակերպում, մոնո և պոլիֆունկցիոնալ համալիրների մոդելավորում: Ինտեգրացված և ներառական կրթության պայմաններում միջանձնային հաղորդակցության կազմակերպման խնդիրը: Մատչելի միջավայրԿԱՊԿՈՒ երեխան հասարակության մեջ. Բնակակնոն զարգացում ունեցողերեխայի սոցիալական շփումների, հաղորդակցման կառուցվածքը ԿԱՊԿՈՒ ունեցող երեխայի հետ: Մասնագիտական կողմնորոշման աշխատանք կրթական հաստատություններում, որոնք իրականացնում են հատուկ կրթության ծրագրեր:

ԿԱՊԿՈՒ անձանց աշխատանքային և մասնագիտական զբաղվածության հեռանկարները: Կրթության հաստատությունների, ընտանիքի և հասարակական կազմակերպությունների սոցիալական գործընկերությունը՝ հասարակության մեջ ԿԱՊԿՈՒ անձնաց ներառելու խնդիրները լուծելու համար: Տեղեկատվական աշխատանքը հասարակության մեջ:

3. Հատուկ մանկավարժության բնագավառները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գիտա-տեսական և մեթոդական ասպեկտները

Հիմնական հասկացություններ: Տիֆլոմանկավարժություն, տեսողության խանգարումներ ունեցող անձ, չտեսնող և թույլ տեսնող անձ, սուրդոմանկավարժություն, լսողության խանգարում ունեցող անձ, չլսող և թույլ լսող անձ, խխունջային ներպատվաստման ենթարկված երեխաներ, օլիգոֆրենոմանկավարժություն, մտավոր զարգացման խանգարումներ ունեցող անձ, լոգոպեդիա, խոսքային խանգարումներ ունեցող անձ, էրգոթերապիա, հաշմանդամություն ունեցող անձ, առօրյա գործողությունների կատարման սահմանափակում ունեցող անձ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա/անձ:

3.1. Տիֆլոմանկավարժություն

Տիֆլոմանկավարժության նպատակն ու խնդիրները հասարակության զարգացման ներկա փուլում: Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ և Ռուսատանում չտեսնողների ուսուցման և դաստիարակության խնդիրների վերաբերյալ գիտական տեսակետների զարգացման պատմություն: Ժամանակակից տիֆլոմանկավարժության զարգացման արդի ուղղությունները:

Տիֆլոմանկավարժության տեսական հիմունքները. Գիտական դրույթներ տեսողության խանգարումների և դրանց մանկավարժական ուղիների փոխհատուցման գործընթացների զարգացման հոգեֆիզիոլոգիական սկզբունքների մասին (П.К. Анохин, А.М. Зимкина, М.И. Земцова), տեսողության խանգարումների դեպքում շտկողազարգացող աշխատանքների սկզբունքների և

մեթոդական հիմունքների գիտական դրույթներ (Л.П. Григорьева, З.Г. Ермолович, И.С. Моргулис, Г.В. Никулина, Л.И. Плаксина, Л.И. Солнцева, В.А. Феоктистова), տեսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և աշխատանքային գործունեության հոգեբանամանկավարժական հիմունքների գիտական դրույթներ(В.З. Денискина, В.П. Ермаков, Б.И. Коваленко,Ю.А. Кулагин, Л.И. Моргайлик, В.С. Сверлов, Б.К. Тупоногов), տեսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության տարբերակված մոտեցման գիտական դրույթները (Ю.С. Ганжий, Н.Г. Крачковская, Н.Б. Коваленко, С.С. Калинер, Н.В. Серпокрыл):

Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների մանկավարժական բնութագիրը. "Հոգեֆիզիկական զարգացման խանգարում" և "կենսագործունեության սահմանափակում" հասկացությունների հարաբերակցությունը: Գործունեության առանձին տեսակների մակարդակով տեսողության խախտումների և սոցիալական փոխգործակցության ժամանակ առաջացող բնորոշ սահմանափակումների բնութագիրը: Ինքնուրույնությունը, անկախությունը նինքնադրսևորումը տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության հաջողության հիմնական ուղենիշներն են: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական ինքնորոշման խնդիրը:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց շարունակական կրթության համակարգը, դրա զարգացման ժամանակակից միտումները: Վաղ համապարփակ օգնություն տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին. փորձ, խնդիրներ, զարգացման հեռանկարներ: Ինտեգրացված ուսուցում, համընդհանուր ներառում, նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակով տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության բովանդակային զարգացում: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց մասնագիտական կրթություն: Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգում:Չտեսնող և թույլ տեսնողների ինտեգրման արդի խնդիրները:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց ուսուցման և դաստիարակության ուղղվածությունը: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության ծրագրամեթոդական ապահովում: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և

դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները. ուսուցման ակնառու-գործնական բնույթը, ուսումնաճանաչողական գործունեության անհատականացումը, ուսումնաճանաչողական գործունեության մանկավարժական ղեկավարության հզորացումը: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության տեխնոլոգիաները: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսումնաճանաչողական գործունեության գնահատում և ինքնագնահատում: Ուսումնաճանաչողական գործունեության գնահատման սոցիալ-նորմատիվային և անհատա-նորմատիվ կողմնորոշիչներ: Մանկավարժական փոխգործակցության տարբերակման չափանիշներ. Ուսուցման տարբեր փուլերում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության տարբերակված մոտեցման իրականացում: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության միջոցները: Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման հատուկ միջոցներ, տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար ուսուցման միջոցների հարմարեցման խնդիրը: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը չտեսնող և թույլ տեսնող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում: Կրթական միջավայրի կազմակերպում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար:

Նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակով չտեսնող և թույլ տեսնող երեխաների հետ իրականացվող շտկողազարգացնող աշխատանքներ: Մնացորդային տեսողության խնդիրը, տիֆլոմանկավարժական տեսության և պրակտիկայի պատմության մեջ դրա լուծման մոտեցումները: Ուսուցման և դաստիարակության գործընթացում մնացորդային տեսողության պահպանման և զարգացման ապահովման գիտամեթոդական ասպեկտները: Պոլիսենսորային հիմքով ընկալման մեթոդների ձևավորման գիտամեթոդական հիմունքները: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց ֆիզիկական և սոցիալական շարժունակության խնդիրը "անկախ կենսակերպի" գաղափարի իրականացման համատեքստում: Կենսապահովման և ինքնասպասարկման, սոցիալականացման, հիմնական հմտությունները տեսողության խանգարումունեցող երեխաների մոտ ձևավորելու առանձնահատկությունները: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց հաղորդակցման մշակույթի

առանձնահատկությունները: Տեսողական դեպրիվացիայի պայմաններում հաղորդակցման փորձի ձևավորման և հարստացման տեսական և կիրառական ասպեկտները:

3.2 Սուրդոմանկավարժություն

Սուրդոմանկավարժության նպատակն ու խնդիրները հասարակության զարգացման ներկա փուլում: Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում,Ռուսաստանում լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրների վերաբերյալ գիտական տեսակետների զարգացման պատմություն:

Սուրդոմանկավարժության տեսական հիմքերը: Հոգեֆիզիկական սկզբունքների զարգացման գործընթացում լսողության խանգարումների փոխհատուցման գիտական դրույթները, լսողության խանգարումների շտկողազարգացնող աշխատանքների գիտական դրույթները, սկզբունքները և մեթոդական հիմունքներ (В.И. Бельтюков, Е.П. Кузьмичева, Л.П. Назарова, Л.В. Нейман, Ф.Ф. Рау, Н.Ф. Слезина, Н.Д. Шматков, Е.З. Яхнина), լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հոգեբանա-մանկավարժական հիմունքների գիտական դրույթները (Р.М. Боскис, Т.А. Григорьева, А.И. Дьячков, С.А. Зыков, Т.И. Обухова, Е.Г. Речицкая, В.Б. Сухова), լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության տարբերակված մոտեցման գիտական դրույթներ(Р.М. Боскис, Т.И. Обухова, Е.З. Яхнина), լսողության խանգարումներ ունեցող երեխաների լեզվի ուսուցման հաղորդակցական համակարգի սկզբունքները (С.А. Зыков):

Լսողության խանգարումներ ունեցող անձանց շարունակական կրթության համակարգը, նրա զարգացման ժամանակակից միտումները: Նորածինների վաղ աուդիոլոգիական սկրինինգի հիմնական խնդիրները:Վաղ համապարփակ օգնություն լսողության խանգարումներ ունեցող երեխաներին. փորձ, խնդիրներ, զարգացման հեռանկարներ: Ինտեգրացված ուսուցում, ներառական ուսուցում, լսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների և դպրոցականների կրթության գործընթացի զարգացում: Լսողության խանգարում ունեցող անձանց մասնագիտական կրթության ապահովում: Միջին մասնագիտական և

բարձրագույն կրթության համակարգում չլսող և թույլ լսող անձանց ինտեգրման արդի խնդիրները:

Լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության ուղղվածությունը: Ուսուցման շտկողազարգացնող ուղղվածության սկզբունքի հիմնական դրույթները, դրանց ստեղծագործական զարգացումը ժամանակակից սուրդոմանկավարժությունում: Լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության ծրագրամեթոդական ապահովում: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները:Ուսուցման ակնառու և գործնական համակարգ, լսողության խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում խոսքի տարբեր ձևերի հարաբերակցությունը, կրթական գործընթացի խոսքային ուղղվածությունը, ուսումնաճանաչողական գործունեության մանկավարժական համակազմի հզորացումը: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթության ուսուցման և դաստիարակության արդի տեխնոլոգիաներ: Լսողության խանգարում ունեցող երեխաների ուսումնաճանաչողական գործունեության գնահատում և ինքնագնահատում: Ուսումնաճանաչողական գործունեության գնահատման սոցիալ-նորմատիվային և անհատա-նորմատիվ կողմնորոշիչներ: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության տարբերակված մոտեցման իրականացում: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման եւ դաստիարակության միջոցներ: Պատմական հետահայաց եւ արդիականություն: Լսողության խանգարում ունեցող երեխաների լսողական թերապիայի ժամանակակից մոտեցումները: Խխունջային ներպատվաստումը որպես լսողության խանգարում ունեցող երեխաների լսողական թերապիայի և լսողության վերականգնման միջոց: Լսողության խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Լսողության խանգարում ունեցող երեխաների համար կրթական միջավայրի կազմակերպում, հարմարեցում:

Նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակով լսողության խանգարում ունեցող երեխաների հետ շտկող-մանկավարժական աշխատանք: Լսողության խանգարման ախտորոշման և շտկման ժամանակակից

մոտեցումները: Լսողության խանգարում ունեցող երեխաների լսողական ընկալման զարգացման գիտական, կազմակերպչական, մեթոդական գործոնները: Բանավոր խոսքի զարգացումը որպես լսողության խանգարում ունեցող անձանց սոցիալականացման առաջատար գործոն: Լսողության խանգարում ունեցող երեխաների բանավոր խոսքի ձեւավորման և զարգացման տարբերակված մոտեցում: Լսողության խանգարում ունեցող սովորողների սոցիալ-կենցաղային կողմնորոշումը և սոցիալական կողմնորոշումը: Խխունջային ներպատվաստման ենթարկված երեխաների հետ շտկողազարգացնող աշխատանքի կազմակերպման հիմնական առանձնահատկությունները:

Լսողության խանգարում ունեցող երեխաներին դաստիարակող ընտանիքների հոգեբանամանկավարժական աջակցման առանձնահատկությունները: Լսողության խանգարում ունեցող երեխայի նկատմամբ ծնողների համապատասխան դիրքորոշման ձևավորման խնդիրը: Ընտանիքում լսողության խանգարում ունեցող երեխայի ակտիվ կենսունակության ձևավորման մանկավարժական պայմաններ:

Լսողության խանգարում ունեցող երեխաների մանկավարժական բնութագիրը: Լսողության խանգարումների դասակարգման ժամանակակից մոտեցումները. "Հոգեֆիզիկական զարգացման խանգարում" և "կենսագործունեության սահմանափակում"հասկացությունների հարաբերակցությունը: Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթական կարիքները: Լսողության խանգարում ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական ինքնորոշման խնդիրը:

3.3 Օլիգոֆրենոմանկավարժություն

Օլիգոֆրենոմանկավարժության նպատակը և խնդիրները հասարակության զարգացման ներկա փուլում: Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության խնդիրների գիտական տեսակետների զարգացման պատմություն: Գիտական հետազոտությունների արդի ուղղությունները հայրենական և արտասահմանյան օլիգոֆրենոմանկավարժության մեջ:

Օլիգոֆրենոմանկավարժության տեսական հիմքերը (А.Н. Граборов, Л.С. Выготский, Г.М. Дульнев, И.Г. Еременко, М.И. Кузьмицкая, Б.И. Пинский, Б. П. Пузанов, О. Шпек)։ Գիտատեսական դրույթներ մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների կրթության, դաստիարակության և մասնագիտական կողմնորոշման շտկող-մանկավարժական հիմքերի վերաբերյալ։

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հոգեբանամանկավարժական բնութագիրը։ Սովորողների մտավոր զարգացման խանգարման առանձնահատկությունները՝ թեթև, չափավոր, ծանր և խորը աստիճանի մտավոր զարգացման խանգարումներ։ Սովորողների մանկավարժական բնութագիրը, նրանց հանրակրթական, աշխատանքային պատրաստման և սոցիալական ինտեգրման հնարավորությունները։ Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող սովորողների մանկավարժական տարբերակումը։

Մասնագիտական կրթությունն ապահովող հաստատությունների համակարգի կատարելագործման հեռանկարները։ Ժամանակակից մոտեցում երեխաների զարգացման վաղ շտկման գործում. մասնագետների և ծնողների միջդիսցիպլինար փոխազդեցությունը երեխային աջակցություն ցուցաբերելու գործընթացում։ Ինտեգրված և ներառական ուսուցման համակարգի զարգացումը և մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակով։ Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաներին հոգեբանամանկավարժական աջակցությունն ապահովող մասնագետների փոխգործակցություն։

Մանկավարժական գործընթացի շտկողական ուղղվածությունը կրթական հաստատություններում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար։ Ուսուցման ուղղվածության սկզբունքի հիմնական դրույթները, դրանց ստեղծագործական զարգացումը ժամանակակից օլիգոֆրենոմանկավարժության մեջ։

Մանկավարժական գործընթացի շտկողազարգացնող ուղղվածությունը մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների համար նախատեսված կրթական հաստատություններում։ Ուսուցման շտկողազարգացնող ուղղվածության սկզբունքի հիմնական դրույթները, դրանց ստեղծագործական զարգացումը ժամանակակից օլիգոֆրենոմանկավարժության մեջ։Մտավոր

զարգացման խանգարում ունեցող երեխաների կրթության բովանդակության որոշման ժամանակակից մոտեցումները: Հատուկ կրթության բովանդակության փոխակերպումը կոմպետենտ մոտեցման համատեքստում: Հատուկ կրթության հիմնական իրավասությունները՝ հաղորդակցական, տեղեկատվական-ճանաչողական, սոցիալ-կենցաղային: Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների կրթության բովանդակության զարգացում: Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության ծրագրամեթոդական ապահովում: Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների համար նախատեսվող նոր դասագրքի և ուսումնական ձեռնարկների հայեցակարգը: Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության մեթոդիկայի առանձնահատկությունները, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների մշակման և ներդրման խնդիրը: Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ուսումնաճանաչողական գործունեության գնահատում և ինքնագնահատում: Մտավոր զարգացման խանգարում ունեցող սովորողների համար կրթական միջավայրի կազմակերպման, հարմարեցման առանձնահատկությունները:

Մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների կրթության համակարգում շտկողազարգացնող աշխատանքները: Շտկողազարգացնող աշխատանքի բովանդակությունը և կազմակերպումը (ուսումնադաստիարակչական գործընթաց, շտկողական պարապմունքների համակարգ): Անհատական և տարբերակված մոտեցման սկզբունքի իրականացում:

Մտավոր զարգացման խանգարում ունեցող շրջանավարտների մասնագիտական կողմնորոշում, վերպատրաստում և արդյունավետության բարձրացման ուղիները:Մտավոր զարգացման խանգարում ունեցողանձանց սոցիալականացման հոգեբանամանկավարժական ասպեկտները: Սովորողների սոցիալական ադապտացիայի հնարավորությունները և ուղիները: Մտավոր զարգացման խանգարում ունեցող մեծահասակների ուղեկցման կազմակերպչական և բովանդակային ասպեկտները՝ կրթություն, աշխատանքային գործունեություն, ժամանց, ընտանիք և այլն:

Ընտանիքիներին ցուցաբերվող սոցիալ-մշակութային և հոգեբանամանկավարժական աջակցության խնդիրը: Ծնողների հետ գործընկերային հարաբերությունների կազմակերպման ուղիները և բովանդակությունը: Ընտանիքում մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների դաստիարակումը:

3.4 Լոգոպեդիա

Խոսքային խանգարումների կանխարգելումը, հայտնաբերումը, ուսումնասիրումը, ախտորոշումն ու շտկումը: Խոսքի վերականգնման ռազմավարությունն ու մարտավարությունը: Խոսքային խանգարումներ ունեցող անձանց ուսուցման, դաստիարակության և աշխատանքային գործունեության արդյունավետ իրականացում: Խոսքային խանգարումներ ունեցող երեխաների դաստիարակությունը, հանրակրթությունում աշխատող հատուկ մանկավարժների նախապատրաստում, լոգոպեդական աջակցության գործընթացի նպատակաուղղված գործունեության իմացություն, խոսքային գործունեության խանգարման էության ու առաջացման պատճառների գիտակցում, խոսքի զարգացման և խոսքային տարբեր խնդիրների հաղթահարման և մանկավարժահոգեբանական աջակցության կազմակերպման գործընթացի նպատակաուղված ղեկավարում: Խոսքային խանգարում ունեցող երեխաների կրթության համակարգում շտկողազարգացնող աշխատանքները: Ընտանիքիներին ցուցաբերվող սոցիալ-մշակութային և հոգեբանամանկավարժական աջակցության խնդիրը: Ծնողների և ընտանիքի հետ համագործակցային հարաբերությունների կազմակերպման ուղիները և բովանդակությունը: Ընտանիքում մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների դաստիարակումը:

3.5 Էրգոթերապիա

Էրգոթերապիայի առարկան, խնդիրներն ու նպատակները: Էրգոթերապիայի գիտական մեկնաբանումը և անհրաժեշտությունը: Էրգոթերապիայի զարգացման պատմությունը, գործունեության հիմնական ոլորտները: Էրգոթերապիայի էթիկական կոդեքսը: Էրգոթերապիայի սահմանումները, զբաղվածության դերն անձի կյանքում: Էրգոթերապիայի տեսական հիմքերը: Մասնագիտության գործունեության ծավալման ոլորտները:

Այցելուակենտրոն մոտեցումը էրգոթերապիայում: Էրգոթերապիայի միջամտության հիմնական նպատակները մանկաբուժության ոլորտում: Էրգոթերապիայի միջամտության հիմնական նպատակները նյարդաբուժության ոլորտում: Էրգոթերապիայի միջամտության հիմնական նպատակները ծերաբուժության ոլորտում: Էրգոթերապիայի միջամտության հիմնական նպատակները հոգեբուժության ոլորտում: Մանկաբուժության մեջ կիրառվող խնամքի էրգոթերապևտիկ մոտեցումները: Մանկական ուղեղային կաթված ունեցող երեխային ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության ուղիները: Աուտիզմ ունեցող երեխային ցուցաբերվող էրգոթերապևտիկ միջամտության ուղիները: Էրգոնոմիկա, ուսումնասիրության առարկան, կապը էրգոթերապիայի հետ: Թիմային աշխատանքի նշանակությունը և դերը էրգոթերապիայում: Ուսուցման, հարմարեցման, զարգացման և վերականգնման մոտեցումները էրգոթերապիայում:

Առաջնային այցելու, երկրորդային այցելու, աշխատանք ընտանիքների և խնամողների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ռ.Ն., Մարության Մ.Կ Թույլ տեսնող երեխաների տեսողական զարգացման ընկալման զարգացումը, Երևան, 2013
2. Ազարյան Ռ.Ն. Հատուկ կրթության հանրագիտարան, Զանգակ, Երևան, 2012, 248 էջ
3. Գրիգորյան Ա. Գ. Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացման մակարդակի հետազոտության և գնահատման մեթոդիկա: Ձեռնարկ լոգոպեդների համար: Երևան, Էդիթ Պրինտ 2018
4. Գրիգորյան Գ.Ֆ. Նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի խանգարումների հայտնաբերումը և կանխարգելումը: «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես N 2, Երևան 2013, էջ 32–38
5. Գրիգորյան Գ.Ֆ., Հովյան Գ. Ռ. Հայախոս երեխաների հնչարտաբերման խանգարումների շտկման առանձնահատկությունները: Հոդվածներ «Կանթեղ» 4/69 գիտամեթոդական հանդեսի: «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2016, էջ 127-135

6. Դաշյան Ա. Հայերեն ժեստերի լեզվի ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2013
7. Եսայան Ա. <<Կրթական իրավունք>> ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012
8. Զոհրաբյան Զ., Բաբայան Լ., Մանուկյան Ա., Հակոբյան Ա., Եփրեմյան Ա. <<Լսողական ընկալման զարգացում և արտաբերման ուսուցում>> Ծրագիր ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ դպրոցների համար, Երևան, 2007
9. ԿարապետյանՍ. Գ., Կիրակոսյան Ա. Ա., Խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաների բառապաշարի հարստացումը //Ուսումնամեթոդական ձեռնարկ, Էդիթ Պրինտ,Երևան, 2014
10. Կարապետյան Ս.Գ., ԿիրակոսյանԱ.Ա., Լոգոպեդական հետազոտության տեսագործնական մոտեցումները //Ուսումնամեթոդական ձեռնարկ, Էդիթ Պրինտ, Երևան, 2016, էջ 94-96
11. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում» (հեղինակային խումբ՝ Լիլիթ Ասրյան, Վարդուհի Կատինյան, Հայկուհի Ադամյան 2018թ.):
12. ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: Դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար //Ռ.Ն. Ազարյանի, Ա.Վ. Ավագյանի խմբագրությամբ. - Երևան: <<Զանգակ>> հրատ., 2016
13. Հարությունյան Զ.Վ., Հովյան Գ.Ռ. «Բազմամասնագիտական թիմային աշխատանքը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման նախապայման», Մանկավարժություն Գիտամեթոդական ամսագիր, 2013, էջ 21-25
14. Հարությունյան Զ.Վ, Հովյան Գ.Ռ., Ծնողների հետ իրականացվող համագործակցային աշխատանքը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման նախապայման: Հոդվածներ՝ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում, 20-րդ դարի մարտահրավերները. Կանխման և հաղթահարման ուղիները» խորագրով կազմապերպված գիտաժողովի նյութերի: Երևան 2016, էջ 110-117
15. Հարությունյան Մ. Ռ., Էրգոթերապիան որպես խնամքի կազմակերպմանն աջակցող մասնագիտություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Մ. Հարությունյան.- Եր.: «Ասողիկ» Հեղ. հրատ., 2017.

16. Հովյան Գ. Ռ., Մանկական խոսքի հոգելեզվաբանական ուսումնասիրությունները ժամանակակից լոգոպեդիայում //Հատուկ մանկավարժության և վերականգնողական հոգեբանության (գիտական հանդես), 1 (1), 2011, էջ 22-26
17. Հովյան Գ.Ռ., Լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները ներառական կրթություն իրականացնող դպրոցներում: «ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ» միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածուի նյութեր, Երևան 2015, էջ 60
18. Մուրադյան Ս.Ս. Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների բառապաշարի զարգացման հատուկ վարժություններ // Ուսումնամեթոդական ձեռնարկ Երևան, 2019, 80 էջ
19. Ներառական կրթության ռազմավարություն դասագիրք, Խմբագրական կազմ՝ Հարությունյան Մ., Պողոսյան Ա., Ավագյան Ա., Գևորգյան Ե. Երկրորդ հրատարակություն: Ասողիկ, 2020.- 312 էջ, համահեղինակ, խմբագրական կազմի անդամ:
20. ՊայլոզյանԺ. Հ., Սարատիկյան Լ. Հ., ԱվագյանԱ. Վ., Մատների լեզուն, Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2016, 60 էջ
21. Սարատիկյանշ Լ.Հ. Նյարդահոգեբանական-շտկողական վարժությունների նշանակությունը խոսքի խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աշխատանքներում «Հատուկ մանկավարժության և վերականգնողական հոգեբանություն», գիտականհանդես, 1(2), Եր., 2011, էջ 50-57
22. Սարատիկյան Լ.Հ., Կակազության կանխարգելման և վաղ շտկողական միջամտության ուղիները //«Հոգեկան առողջության հայկական հանդես», Երևան, 2014, N5, էջ 33-38
23. Սվաջյան Ա. Հ. Կրթության Առանձնահատուկ Պայմանների Կարիք Ունեցող Երեխաների Դպրոցական Ուսուցման Նախապատրաստման Ուսումնամեթոդական Ձեռնարկ: Էդիտ պրինտ, Երևան, 2012
24. Алексеевна Г. С. ,,Критерии диагностической оценки логопедических проблем у детей старшего дошкольного возраста для выбора оптимальных коррекционных здоровьесберегающих технологий,,. 2017.

25. Григорян Г.Ф., Овян Г. Р., Актуальность проблемы коррекции звукопроизношения у детей с нарушениями речи. «Современное образование»: Сборник статей Хмеждународной научно-практической конференции. 2017. Пенза; С. 101-106.
26. Проблемы ранней диагностики и раннего логопедического вмешательствадетей с нарушениями спектра аутизма ПЕДАГОГИКА И СОВРЕМЕННОЕ ОБРАЗОВАНИЕ: ТРАДИЦИИ, ОПЫТ И ИННОВАЦИИ: сборник статей VII Международной научно-практической конференции / Под общ.ред. Г.Ю. Гуляева – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2019. 262 с
27. Факторы диагностики дислексии. СОВРЕМЕННОЕ ОБРАЗОВАНИЕ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ, ДОСТИЖЕНИЯ И ИННОВАЦИИ: сборник статей XXVIII Международной научно-практической конференции / Под общ.ред. Г.Ю. Гуляева – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2019. 125 с.
28. «Psycho-pedagogical approaches in Speech therapy intervention used with shy pre-schoolchildren» СОВРЕМЕННОЕ ОБРАЗОВАНИЕ: АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ, ДОСТИЖЕНИЯ ИИННОВАЦИИ: сборникстатей XIV Международной научно-практической конференции /Подобщ. ред. Г.Ю. Гуляева – Пенза: МЦНС «Наука и Просвещение». – 2018. 270 с.
29. Harutyunyan M., Sadlo G. (2019). Inclusive Education in Armenia: Experience of Teachers Reveals Need for Occupational Therapy, The Journal of the International Association of Special Education Volume 19, Number 1, University of Minnesota Printing Services
30. Kielhofner, G. (2008) Model of Human Occupation: Theory and Application. 4th ed. Philadelphia, PA: Lippincott Williams & Wilkins
31. Kramer P., Hinojosa J. (2010). Frames of Reference for Pediatric Occupational Therapy, Lippincott Williams & Wilkins; Third edition.
32. Pekçetin, S. & Gunal, A. (2017). Early Intervention in Pediatric Occupational Therapy. 10.5772/intechopen.68316.
33. Rodger, S. & Ziviani, J. (2006). Occupational therapy with children: understanding children's occupations and enabling participation, Blackwell Publishing Ltd.

34. Shahinyan, A., & Harutyunyan, M. (2021). Role of Occupational Therapy while working with Cerebral Palsy children using orthopedic assistive devices, Armenian journal of special education, Scientific methodological journal, Vol. 4 (2), p. 39-59
35. Speech therapy intervention with armenian-speaking children having sounds pronunclation disorders. ARMENIAN JOURNAL OF SPECIAL EDUCATION ISSN 2579-2881 Published: Scientific Methodological Journal, First issue of the first volume; Yerevan, 2020, p. 52-66.
36. Walther-Thomas Ch., Korinek L., McLaughlin V. L., Williams B. T., Collaboration for Inclussive Education: Developing Successful Programs. Boston - London - Toronto: Allyn & Bacon, 2000.
37. Townsend E., Polatajko H. (2007). Enabling Occupation II: Advancing an Occupational Therapy Vision for Health, Well-being & Justice through Occupation, Canadian Association of Occupational Therapists, ISBN: 978-1-895437-76.
38. World Health Organization, (2001). International Classification of Functioning, Disability and Health (ICF). Geneva.